

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԱՍԻՍՆԵՐԻ ՀԱՅԱՑՔԻ ՏԱԿ*

Ե՞րբ են եղել այսքան բեղուն, այսքան բերրի հողերն հայոց,
Ե՞րբ են ծաղկել այգիները այսքան շռայլ ու լիածոց,
Ե՞րբ է այսպես լուսարձակվել հայոց երկնի աստղը սուտակ՝
Զանգուն այսքան ուրախ եղել Մասիսների հայացքի տակ:

Ե՞րբ է այսպես շատրվանել հայոց բախտի արևը բորբ,
Հույլ ու երակ ծիածանվել հայոց հողում դարերով որբ,
Ե՞րբ է, ե՞րբ է եղել այսքան մեր գարունը լուսապսակ՝
Ձմեռը մեր՝ ջերմ ու թեթև՝ Մասիսների հայացքի տակ:

Ե՞րբ է տեսել հայն իր կյանքում այսօրվա պես մի Հայաստան,
Հեքիաթային ու լուսակերտ Երևանի նման ոստան.
Ու այսպիսի մի նոր սերունդ՝ աշխարհացունց մի նոր բանակ,
Ե՞րբ է աճել, ո՞վ է տեսել Մասիսների հայացքի տակ:

Ե՞րբ է եղել հայը այսքան մեծասքանչ ու հրաշագործ,
Ե՞րբ է այսպես հեռու թռել աստղերի մեջ միտքը հայոց,
Մեր վերելքի սանդուղքները՝ դեպ երկնքի ծովը անտակ,
Ե՞րբ է եղել այսքան ամուր՝ Մասիսների հայացքի տակ:

Ե՞րբ է եղել հին աշխարհում այսքան շենշող ու շինարար,
Ո՞վ է տեսել հրաշք մի նոր՝ մեծակառույց մի նոր աշխարհ,
Ու երգն հայոց ե՞րբ է հնչել այսքան խնդուն ու անպարփակ,
Այսքան ծաղիկ ե՞րբ է բուսել Մասիսների հայացքի տակ:

Ե՞րբ է եղել այսքան հզոր ժողովուրդը նահրական,
Ե՞րբ է եղել ազգերի հետ այսքան մոտ ու եղբայրական,
Հավարամյա իր պայքարում աշխարհն հայոց ողբանվագ,
Ե՞րբ է այսքան խաղաղ ապրել Մասիսների հայացքի տակ:

Ե՞րբ է եղել ուղին հայի այսքան շիտակ ու ապահով,
Այսքան ճամբա ե՞րբ է անցել մեր երկնամերձ լեռնաշխարհով,
Դուռն աշխարհի բաց է մեր դեմ ու դռները մեր անխորտակ
Բաց են հավերժ աշխարհի դեմ՝ Մասիսների հայացքի տակ:

1959

* Հաճույքով վերահրատարակում ենք Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանի շրջանավարտ և Մայր Աթոռի գրասենյակային աշխատող Վաչագան Հովհաննիսյանի վերջերս Հայպետհրատի կողմից Երևանում լույս ընծայված *«Վաղվա համար»* բանաստեղծությունների գրքույկից սույն քերթվածը, ի քաջալերություն երիտասարդ բանաստեղծի:—*Խմբ.:*